ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մարտի 2013 թվականի N 67-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՔԱՂՍԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 59-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի հունվարի 22-ի N 09-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Կոմիտաս Հունանյանին 2013 թվականի մարտի 11-ից մինչև մարտի 13-ը ներառյալ տալ աուդիտորական առաջադրանքի հանձնարարական, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում 2012 թվականի համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության և դրանց ստանդարտների կիրառելի հիմունքներին համապատասխանության, կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերին ներկայացվող պահանջների պահպանման և զուտ շահույթի տնօրինման գործընթացների գնահատման նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ